Իսրայելի դիվանագիտական դեմարշը. հակազդեցություն F-35 նախագիծ Թուրքիայի վերադարձին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 20.07.2026[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է Իսրայելի ղեկավարության դիվանագիտական դեմարշն ի պատասխան ԱՄՆ վարչակազմի մտադրությանը՝ Թուրքիային վերադարձնել F-35 Lightning II կործանիչների արտադրության և սպասարկման ծրագրին: Դիտարկվում են Մերձավոր Արևելքում ուժերի հավասարակշռության հնարավոր խախտման հետ կապված աշխարհաքաղաքական ռիսկերը, ինչպես նաև գնահատվում է ամերիկյան նախաձեռնությունների ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության վրա: Հատուկ ուշադրություն է դարձվել պատժամիջոցների ռեժիմի պատմական համատեքստին (ներառյալ C-400-ի վերաբերյալ գործարքը) և թուրքական Ազգային ավիացիոն KAAN ծրագրի իրականացման հեռանկարներին:

Բանալի բառեր. *Թուրքիա, Իսրայել, ԱՄՆ, F-35, Մերձավոր Արևելք, ուժերի հավասարակշռություն, ռազմատեխնիկական համագործակցություն, C-400, KAAN, տարածաշրջանային անվտանգություն, աշխարհաքաղաքականություն:*

Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուն դիմել է Սպիտակ տան ղեկավար Դ. Թրամփին՝ կոչ անելով հրաժարվել Անկարայի՝ որպես նորագույն սերնդի *F-35 Lightning II* կործանիչների արտադրության և սպասարկման ծրագրի լիիրավ մասնակցի, վերականգնման ծրագրերից: Դեմարշի համար առիթ են հանդիսացել Թուրքիայում ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ ԱՄՆ առաջնորդի հերթական հայտարարությունները, որտեղ նա հաստատել է Վաշինգտոնի պատրաստակամությունը՝ վերակենդանացնելու թուրքական կողմի հետ ռազմատեխնիկական համագործակցության նախկին ձևաչափը:

Իր դեմարշի շրջանակներում Բ. Նեթանյահուն ուշադրությունը կենտրոնացրել է այն բանի վրա, որ *F-35* նախագծին Անկարայի վերադարձն անխուսափելիորեն «*Մերձավոր Արևելքում ուժերի հավասարակշռության խախտման*» կհանգեցնի՝ ուղղակիորեն մատնանշելով թուրքական ղեկավարության մոտ «*ագրեսիվ ձգտումների*» և նեոօսմանյան հավակնությունների առկայությունը: Իսրայելի կառավարության ղեկավարն ընդգծել է, որ ներկայիս Թուրքիան տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը նպաստող սուբյեկտ չէ: Նրա համոզմամբ՝ նման հզոր ավիացիոն ներուժի փոխանցումն արմատական մի ռեժիմին, որը «*Վաշինգտոնին բարեհաճություն է ցուցաբերում միայն պրագմատիկ շահի պահերին*», ԱՄՆ-ի համար տարածաշրջանային ծավալման նոր ալիքի կվերածվի: Այս խոսքում ակնհայտ քննադատություն է նկատվում Դ. Թրամփի հասցեին, որի հաճոյախոսական արտահայտությունները Ռ. Թ. Էրդողանի՝ որպես «*լավ ընկերոջ*» մասին, Թել Ավիվում լուրջ թերահավատություն են առաջացնում: Նեթանյահուն, փաստորեն, Սպիտակ տանը նախազգուշացրել է թուրքական երաշխիքներին չափից դուրս վստահելու առնչությամբ՝

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 11.07.2026 թ.:

դրանք համարելով միայն մարտավարական խուսավարում Անկարայի աշխարհաքաղաքական մեծ խաղում:

Օտարման պատմություն. C-400-ի գործարքից մինչև պատժամիջոցներ

F-35 նախագծից Անկարայի օտարման գործընթացն սկիզբ է առել 2017-ին, երբ թուրքական ղեկավարությունը, անտեսելով Վաշինգտոնի և Հյուսիսատլանտյան դաշինքի գործընկերների կոշտ նախազգուշացումները, Մոսկվայի հետ համաձայնագիր ստորագրեց բարձր տեխնոլոգիական *C-400 «Триумф»* ՀՕՊ համակարգերի ձեռքբերման վերաբերյալ: Այս քայլը Թուրքիայի յուրօրինակ արձագանքն էր ՆԱՏՕ-ի ներսում ձգձգվող բյուրոկրատական և ֆինանսական խոչընդոտներին, որոնք արգելափակում էին հակահրթիռային պաշտպանության ազգային ուրվագծի թարմացումը: Որպես ռուս-թուրքական գործարքի դեմ արմատական փաստարկ՝ Սպիտակ տունն առաջ է քաշել ՀՕՊ միասնական համակարգի շրջանակներում ամերիկյան ավիացիոն հարթակների և ռուսական զենիթային համալիրների տեխնիկական անհամատեղելիության մասին թեզը: Բացի այդ, Վաշինգտոնը լուրջ մտահոգություններ է հայտնել Մոսկվայի տրամադրության տակ նորագույն կործանիչների գաղտնի կոդավորումների և մարտավարատեխնիկական չափանիշների հնարավոր արտահոսքի վերաբերյալ: Իսկ գլոբալ առումով Վաշինգտոնը տվյալ պայմանագիրը մեկնաբանել է որպես Անկարայի բաց քաղաքական դեմարշ, որը վնասում է Ատլանտյան համերաշխությանը Սիրիայում տարածաշրջանային դիմակայության սրման և ուկրաինական ճգնաժամի շուրջ լարվածության աճի համապատկերում:

Կողմերի հարաբերություններում անդառնալիության կետ դարձավ 2019 թվականը, երբ ռուսական *C-400 «Триумф»* դիվիզիոնների մատակարարման սկիզբը Վաշինգտոնին ստիպեց Անկարային վերջնականապես հեռացնել *F-35* նախագծի մասնակիցների թվից: 2020 թ. այս սահմանափակող միջոցը ձեռք է բերել պարտադիր բնույթ՝ ամրագրված լինելով պաշտպանության ազգային ծախսերի մասին օրենքում (NDAA): Նշված ակտի 1245-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ Պենտագոնի վրա խիստ արգելք է դրվել *F-35* ավիացիոն հարթակների տեղափոխման վրա, քանի դեռ ԱՄՆ գործադիր իշխանությունը չի հավաստել, որ Թուրքիան այլևս ռուսական *C-400* համալիրներ չունի: Արդյունքում թուրքական կողմը բախվել է ոչ միայն ինքնաթիռների մատակարարման, այլև նախկինում կատարված մոտ $1,4 մլրդ կանխավճարների վերադարձի արգելափակման հետ:

Մի քանի տարի շարունակ ամերիկացի օրենսդիրները նաև զսպում էին *F-16* կործանիչների մատակարարման և արդեն գոյություն ունեցող թուրքական ավիահավաքակայանի արդիականացման նոր պայմանագրերի կնքումը: Այս միջոցառումները ժամանակավորապես սահմանափակեցին Թուրքիայի ՌՕՈՒ-ի թարմացման տեմպերը՝ ԱՄՆ-ի տարածաշրջանային մյուս գործընկերների զանգվածային վերազինման համապատկերում: Մասնավորապես, Իսրայելին և

Հունաստանին 5-րդ սերնդի *F-35* կործանիչների զուգահեռ մատակարարումները երկար ժամանակ Անկարայի սուր արձագանքն էին առաջացրել, որը վախենում էր Արևելյան Միջերկրական ծովում ուժերի հավասարակշռության փոփոխությունից:

Թուրքական *KAAN* ավիացիոն հարթակի ստեղծման ծրագրի իրականացման շուրջ տեղեկատվական համապատկերն առանձնանում է գնահատականների էական բևեռականությամբ: Չնայած 5-րդ սերնդի այս կործանիչի՝ ոչ միայն համաշխարհային շուկայում գերիշխող դիրք գրավելու, այլև իր չափանիշներով ամերիկյան *F-35*-ները գերազանցելու ունակության մասին Թուրքիայի բարձրագույն քաղաքական ղեկավարության, այդ թվում՝ Ռ. Թ. Էրդողանի պարբերաբար կատարած լավատեսական հայտարարություններին, մասնագիտացված փորձագիտական հանրությունն արձանագրում է, որ առկա են համակարգային տեխնոլոգիական խոչընդոտներ: Մասնավորապես, մասնագետները կենտրոնանում են ծանր համաձուլվածքների, ժամանակակից ավիոնիկայի և ուժային կայանքների մշակման ոլորտում կրիտիկական դժվարությունների վրա, որոնց թուրքական ռազմարդյունաբերական համալիրի՝ սեփական ուժերով արդյունավետ յուրացումը չափազանց խնդրահարույց է թվում: Վաշինգտոնի կողմից գործող սահմանափակման ռեժիմը, փաստորեն, արգելափակում է Անկարայի համար դաշինքի ներսում բարձր տեխնոլոգիական իրավասությունների փոխանակման հնարավորությունները և անհնար դարձնում առանցքային հանգույցների ու բաղադրիչների ձեռքբերումը: Բացի այդ, էական խոչընդոտ է մնում *KAAN* նախագծի հաջող իրագործման սահմանափակ պետական ֆինանսավորումը, ինչն այդքան ընդգրկուն ու պաշարատար ծրագրի իրագործման պայմաններում անխուսափելիորեն հանգեցնում է արդյունավետության ցուցանիշների վատթարացման:

ԱՄՆ-ի հետ մերձեցման նոր շրջապտույտը

Դրան զուգահեռ՝ սկսած 2020 թվականից, Անկարան հետևողականորեն դիվանագիտական ջանքեր է գործադրել՝ ուղղված սահմանափակման ռեժիմի ապաակտիվացմանը կամ, առնվազն, ամերիկյան պատժամիջոցների մասնակի մեղմացմանը: Այս համատեքստում թուրքական կողմը խիստ պրագմատիկ կերպով շահագործեց փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակը՝ Վաշինգտոնին պարտադրելով բարդ առևտրի ձևաչափ ատլանտյան և տարածաշրջանային օրակարգի հարցերի լայն շրջանակի շուրջ: Այս գործընթացում նշանակալի իրադարձություն էր 26.01.2024 թ. տարեթիվը, երբ Թուրքիան վերջնականապես հավանություն տվեց Շվեդիայի անդամակցությանը Հյուսիսատլանտյան դաշինքին, որից հետո Սպիտակ տան վարչակազմը պաշտոնապես նախաձեռնեց $23 միլիարդ արժողությամբ ծավալուն պայմանագրի ապաշրջափակման ընթացակարգը: Նշված գործարքը նախատեսում էր *F-16* 40 ժամանակակից ավիացիոն հարթակների մատակարարում, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիական սարքավորումների 80 լրակազմերի

փոխանցում՝ արդեն Անկարայի ունեցած կործանիչների հավաքակայանի խորն արդիականացման համար: Չնայած Ռենդ Փոլի գլխավորությամբ մի խումբ օրենսդիրների փորձին՝ կրկին վեթո դնել զենքի փոխանցման վրա, 01.03.2024 թ. ԱՄՆ Սենատը վերջնականապես օրինականացրեց համաձայնագրի իրականացումը:

Դ. Թրամփի երկրորդ նախագահության օրոք իրադարձությունների զարգացումը նշանավորվեց ռազմատեխնիկական մերձեցման նոր շրջափուլով. 2026 թ. հունիսի կեսերին Սպիտակ տունն օրենսդիրներին պաշտոնապես ծանուցեց Անկարային մոտ $700 միլիոն արժողությամբ *General Electric F110* ուժային կայանքների խմբաքանակի մատակարարումն արտոնելու մտադրության մասին: Թուրքական կողմի համար տվյալ պայմանագրի իրականացումը գոյութենական բնույթ է կրում, քանզի հենց այդ կայանքներն են կոչված ապահովելու *KAAN* կործանիչի առաջին նմուշների թռիչքային փորձարկումները միջանկյալ փուլում, որը նախորդում է սեփական *TF 35000* շարժիչի մշակման հավակնոտ շրջափուլի ավարտին: Հատկանշական է դարձել նաև նախագահական վարչակազմի կոշտ դիրքորոշումը, որը ներկայացվել է Կապիտոլիումի բլրի առանցքային դեմքերի ուշադրությանը. *CAATSA-ի* սահմանափակման ակտի մեխանիզմների միջոցով փոխանցումն արգելափակելու ցանկացած փորձ Սպիտակ տան կողմից կասեցվելու է՝ խորհրդարանական հաստատման ստանդարտ ընթացակարգերը շրջանցող գործարքի իրականացման միջոցով:

Փորձագիտական հանրությունում գերակշռում է այն համոզմունքը, որ Թրամփի նախաձեռնությունը հնարավոր է դարձել բացառապես ռուսական *C-400 «Триумф»* ՀՕՊ զենիթային համակարգերի շահագործումից Անկարայի հրաժարվելու հարցի շուրջ վերջնական փոխհամաձայնության հասնելու շնորհիվ: Դեռևս 2025-ի վերջին թուրքական վերնախավի հետ փոխկապակցված տեղեկատվական աղբյուրները հայտնում էին հանրապետության ղեկավարության պատրաստակամության մասին՝ ապաակտիվացնել ռուսական գործոնն իր ՀՕՊ-ում՝ համալիրները ՌԴ հայրենադարձելու կամ դրանք 3-րդ երկրներ վերաարտահանելու միջոցով՝ Մոսկվայի համաձայնության առկայության դեպքում: Որպես արմատական այլընտրանք դիտարկվել է համակարգերի ամբողջական հեռացման սցենարը, որը կոչված է վերջնականապես վերացնելու Հյուսիսատլանտյան դաշինքի պաշտպանական ուրվագծի տեխնոլոգիական ռիսկերի վերաբերյալ մտավախությունները: Անկարայի այս քայլը, որը կրում է Վաշինգտոնի հանդեպ պարտքային պարտավորության բնույթ, ճանապարհ է հարթում *F-35* նախագծի լիիրավ մասնակիցների թվում Թուրքիայի վերաինտեգրման համար: ԱՄՆ առաջնորդի հետևողական հայտարարությունները, որոնք հնչել են 2025 թ. դեկտեմբերից և հաստատվել ՆԱՏՕ-ի հուլիսյան գագաթնաժողովի ընթացքում, վկայում են սահմանափակման ռեժիմն ապամոնտաժելու Սպիտակ տան մտադրության մասին: Դա ենթադրում է ոչ միայն ավիացիոն հարթակների ուղղակի մատակարարումների վերսկսում, այլև բարենպաստ իրավիճակի ստեղծում Թուրքիայի ազգային ավիացիոն արդյունաբերության հարկադիր զարգացման համար:

Աշխարհաքաղաքական ռիսկ. սպառնալիք ուժերի հավասարակշռությանը

Մերձավոր Արևելքում Բ. Նեթանյահուի դեմարշն արտացոլում է Թել Ավիվի մտահոգությունը թուրքական օդուժի որակական ուժեղացման հետևանքով տարածաշրջանային օդային տարածքում տեխնոլոգիական գերիշխանության հնարավոր կորստի կապակցությամբ: Մերձավոր Արևելքում *«ուժերի հավասարակշռության անխուսափելի խախտման»* մասին Իսրայելի առաջնորդի հիմնարար թեզը պետք է մեկնաբանել ոչ թե որպես հուզական հռետորաբանության տարր, այլ իբրև ստեղծված անվտանգության ճարտարապետությանն իրական սպառնալիքի արձանագրում: Անկարայի մոտ հրեական պետության մարտավարական միջուկային զինանոցի համարժեքի բացակայության պայմաններում հենց օդաչուավոր ավիացիայի հատվածում գերակայությունն է մնում առանցքային գործոն, որն Իսրայելին ռազմավարական առավելություն է ապահովում Թուրքիայի հետ տարածաշրջանային մրցակցության շրջանակներում:

Կանոնավոր զինված ուժերի, զրահատանկային ներուժի, հրետանային հարթակների և, առաջին հերթին, ռազմածովային բաղադրիչի քանակական հարաբերակցության չափանիշները ցույց են տալիս ակնհայտ անհավասարակշռություն, որը չի զարգանում Թել Ավիվի օգտին: Թուրքական բանակն իր օպերատիվ հնարավորություններով և թվակազմով պահպանում է Հյուսիսատլանտյան դաշինքի նշանակությամբ երկրորդ ուժի կարգավիճակը՝ ԱՄՆ-ից հետո: Այս ոլորտում Անկարայի էական առավելությունը ներմուծման փոխարինման բարձր աստիճանն է. սպառազինությունների շուրջ 80%-ը վերարտադրվում է ազգային ռազմարդյունաբերական համալիրի հզորությունների միջոցով:

Իսրայելական ռազմաքաղաքական փորձաքննության գնահատականներով՝ վերջին տարիներին Թուրքիան *«անհավանական հաջողություններ»* է գրանցել զինված ուժերի բոլոր տեսակների խորը վերազինման և բարձր տեխնոլոգիական պատերազմի հոլովույթում դրանց ինտեգրման ոլորտում: Թուրքական կողմը բավական արդյունավետորեն ավելացնում է հարվածային և հետախուզական ԱԹՍ-ների, ժամանակակից տանկերի, ինչպես նաև ռեակտիվ և դաշտային հրետանային համակարգերի լայն անվանացանկի արտադրությունը: Զգալի առաջընթաց է գրանցվել նույնիսկ ռազմական նավաշինության հատվածում, որտեղ սեփական իրավասությունների ներդրման հաշվին Անկարան գրեթե ամբողջությամբ ապահովում է ռազմածովային ուժերի կարիքները: Վերլուծաբաններն արձանագրում են, որ չնայած ՑԱԽԱԼ-ի բարձր տեխնոլոգիական հագեցվածությանը, Թել Ավիվը, ի դեմս Թուրքիայի, բախվում է չափազանց վտանգավոր հակառակորդի հետ, որը, ի տարբերություն Իսրայելի, ունի ռազմական գործողությունների անհերքելի առավելություն ցամաքային և ծովային թատերաբեմերում զգալի ռազմավարական խորության տեսքով:

Ելնելով վերոգրյալից՝ օդաչուավոր ավիացիան հանդես է եկել որպես միակ ռազմավարական բաղադրիչ, որն ապահովում է հրեական պետության ռազմատեխնիկական հավասարության պահպանումը թուրքական կողմի հետ գլոբալ

դիմակայությունում: Հենց օդային տարածքում տեխնոլոգիական գերազանցությունն էր որպես ռիսկերի մեղմացման հուսալի գործիք ծառայել Թել Ավիվի համար՝ թույլ տալով երկկողմ հակասությունների սրման պայմաններում զսպել Անկարայի ծավալապաշտական ներուժը և նվազագույնի հասցնել նրա ուղղակի ուժային միջամտությունը տարածաշրջանային գործընթացներին: Ներկայումս թուրքական ՌՕՈՒ-ն ապրում է համակարգային ճգնաժամի շրջան, որը պայմանավորված է ոչ միայն նոր սերնդի բարձր տեխնոլոգիական ավիացիոն հարթակների ձեռքբերման խոչընդոտներով, այլև առկա ավիահավաքակայանի կրիտիկական մաշվածությամբ: Այս վատթարացումն ազդում է ոչ միայն հարվածային բաղադրիչի, այլև ռազմատրանսպորտային հատվածի վրա, ինչը հստակ հաստատվում է *Lockheed Martin C-130 Hercules* ինքնաթիռի աղետով, որը տեղի է ունեցել 11.11.2025 թ.: Հաշվի առնելով, որ վթարի ենթարկված ինքնաթիռը շահագործման մեջ էր 1968 թվականից, մասնագիտացված փորձագիտական համայնքն այս միջադեպը դիտարկում է որպես հնացած սարքավորումների կառուցվածքային պաշարի կրիտիկական սպառման բնական հետևանք: Այս դեպքում ինքնաթիռը պետք է փոխարինվի:

Վերջին տասնամյակի ընթացքում մարդատար ավիացիայի թուրքական հատվածը գտնվում էր ակնհայտ լճացման վիճակում, ինչը հակադրվում էր ուղղաթիռաշինության ոլորտում ունեցած հաջողություններին, որտեղ *Turkish Aerospace* կոնցեռնի հզորությունները թույլ տվեցին բանակն ապահովել մարտական մեքենաների սեփական շարքով: Այս անհամաչափությունն իսրայելական ՌՕՈՒ-ին երաշխավորել է անհերքելի տեխնոլոգիական գերակայություն Մերձավոր Արևելքի և Արևելյան Միջերկրական ծովի օդային տարածքում: Հաշվի առնելով ռազմավարական ավիացիայի հիմնարար նշանակությունը ժամանակակից անվտանգության ճարտարապետության մեջ, հենց այս գործոնն է ծառայել որպես արդյունավետ հակակշիռ թուրքական զինված ուժերի զգալի թվային գերազանցությանը ցամաքային և ծովային թատերաբեմերում: Այսպիսով, Թել Ավիվին հաջողվում էր պահպանել ռազմա-ռազմավարական հավասարակշռությունը, որը հուսալի գործիք էր Անկարայի ծավալապաշտական նկրտումները զսպելու համար:

Վաշինգտոնի նախաձեռնած միջոցառումները, որոնք ուղղված են թուրքական ՌՕՈՒ-ում *«ավիացիոն պակասի»* վերացմանը, Թել Ավիվի կողմից դիտարկվում են որպես գոյութենական մարտահրավեր, որը հղի է տեխնոլոգիական գերիշխանության կորստով և մերձավորարևելյան տարածքում Իսրայելի ռազմաքաղաքական ազդեցության համակարգային վատթարացմամբ: Հենց այս համատեքստում պետք է մեկնաբանել Բ. Նեթանյահուի նախազգուշացումը. *F-35* նախագծի վերակենդանացումը Անկարայի համար ոչ այնքան ՆԱՏՕ-ի անդամ երկրի զինված ուժերի արդիականացման գործիք է, որքան տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ապամոնտաժման հիմնարար ձգան: Իսրայելի ղեկավարության համոզմամբ, նման սցենարն անխուսափելիորեն կվնասի հենց Սպիտակ տան երկարաժամկետ ռազմավարական

շահերին: Ստեղծված իրավիճակում կանխատեսվում է Սենատում, Կոնգրեսում և Թրամփի մերձավոր շրջապատում իսրայելական լոբբիստական կառույցների կտրուկ ակտիվացում՝ ուղղված գործարքին կոշտ հակազդմանը և *F-35 Lightning II*-ի մատակարարումների նկատմամբ սահմանափակող ռեժիմի երկարաձգմանը:

Եզրակացություն

Կարելի է ենթադրել, որ Թել Ավիվի հետագա ռազմավարությունը կկենտրոնանա զենքի պայմանագրի զուտ տեխնիկական կողմը լայնածավալ աշխարհաքաղաքական երկընտրանքի վերածելու վրա: Սպիտակ տան առջև դրված է երկու առանցքային տարածաշրջանային դաշնակիցների միջև ընտրության հարցը, որոնց հետ Վաշինգտոնը պատրաստ է կիսել Մերձավոր Արևելքում անվտանգության ճարտարապետության համար պատասխանատվության բեռը: Իսրայելի և Թուրքիայի հետ ԱՄՆ-ի հավասարության և հավասարակշիռ փոխգործակցության պահպանման սցենարը վերջնականապես մերժվեց Իսրայելի ղեկավարության կողմից՝ որպես անընդունելի: